

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ղարսյան
annagharslyan@gmail.com

Հիմնաբաներ: Տնտեսագիտական տերմին, փոխառություն, հայերեն համարժեք տարբերակ, ընդհանուր և միջտերմինահամակարգեր, գիտա-ճյուղեր, տերմինային բազմիմաստություն, տերմինային հոմանիշություն:

Անտիկ ժամանակներից մինչև օրս իր ձևավորման, կայացման, կատարելագործման որոնողական ճանապարհին է գծում տնտեսագիտությունը, որի զարգացումը իր պարբերական շարժման մեջ ազդակ է դառնում նոր հասկացությունների առաջացմանը: Վերջիններիս անվանողական գործառույթը նպաստում է տնտեսագիտական տերմինահամակարգի անընդմեջ համալրմանը: Մասնագիտական բառապաշարի ձևավորումն ու զարգացումը պայմանավորված են տնտեսագիտության ուսումնասիրության առարկայով, որն է՝ մարդկանց տնտեսական վարքագիծը: Այն կարգավորվում և դրսևորվում է նաև քաղաքական, իրավական, աշխարհագրական, սոցիալական և այլ բնագավառներում:

Վերոնշվածից ելնելով՝ սահմանենք *տնտեսագիտական տերմին* հասկացությունը:

Ինչպե՞ս ենք որոշում տերմինների պատկանելությունը այս կամ այն բնագավառին մասնավորապես այնպիսի դեպքերում, երբ որևէ բնագավառի տերմին գործածվում է տարբեր ոլորտներում: Տերմինագիտության մեջ տերմինահամակարգերը տարբերակվում են իրենց հետազոտության ենթակա առարկայով: Ըստ այդմ՝ որևէ բնագավառի պատկանող տերմին «պետք է արտահայտի հենց այդ բնագավառի առարկայի (երևույթի, գործունեության, գործընթացի,

հետազոտության առարկայի և այլնի) հասկացություն»¹: Հետևաբար տնտեսագիտական տերմինները սահմանափակ ռեսուրսների պայմաններում մարդկանց տնտեսական վարքագծի վերաբերյալ հասկացություններ արտահայտող լեզվական միավորներ են²:

Տարբերակում ենք տնտեսագիտական տերմինահամակարգ և նրանից սկիզբ առած, սնուցվող, առանձին լեզուների պատկանող տերմինահամակարգեր:

Տնտեսագիտության առաջընթացը մարդկային հասարակության տնտեսական գործընթացների և երևույթների առաջացման, հաստատման և զարգացման պատմություն է: Հետևաբար, իր կառուցվածքային աստիճաններով ու գործառույթներով պայմանավորված³ և իր տեսական առաջին ձեռքբերումներից սկսած⁴ այն գիտական շտեմարաններում պահպանում է մարդկության տնտեսական զարգացմանը վերաբերող բազմաքանակ նյութ՝ իր ընդհանուր տերմինահամակարգով:

Տնտեսագիտական տերմինահամակարգը բավականին ընդգրկուն է: Այն պայմանավորված է իր մանրահամակարգերի⁵ բազմազանությամբ: Դրանք տերմինահամակարգը բնութագրում են ստորակարգային հատկանիշներով՝ համակարգի և նրա ներքին

¹ *Էդ. Աղայան*, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 8:

² *Հ. Աղաջանյան*, Տնտեսագիտության տեսություն, մաս I, Ե., 2009, էջ 13:

³ Տե՛ս *Լ. Անանյան*, *Լ. Պետրոսյան*, «Տնտեսական պատմություն» ուսումնական ձեռնարկ, Ե., 2005, էջ 5-7:

⁴ Տնտեսագիտության տեսական առաջին աշխատությունը Գ.Բյուդեի «Տրակտատ ասսայի մասին» է, որը լույս է տեսել Ֆրանսիայում 1514 թ.-ին, հաջորդը Վ. Պետտիի ուսումնասիրությունն է՝ «Տրակտատ հարկերի և տուրքերի մասին» (1662 թ.), իսկ առավել ընդգրկունը՝ Ա. Սմիթի գործը՝ «Հետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» (1776 թ.):

⁵ Մանրահամակարգերը պայմանավորված են տնտեսական գիտությունների դասակարգմամբ՝ ըստ ճյուղային կառուցվածքի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և կապ, շինարարություն), ըստ գործառույթային նշանակության (ֆինանսներ, վարկ, մարքեթինգ, կառավարում, արժեթղթեր, ապահովագրություն, բնօգտագործում և այլն), ըստ տնտեսության մակարդակների (միկրոտնտեսագիտություն, մակրոտնտեսագիտություն, մեզոտնտեսագիտություն, համաշխարհային տնտեսագիտություն) և այլն:

միավորների ներքին կապերի բնույթով, նրանց ներքին էությամբ⁶: Գերադասի համեմատ՝ մանրահամակարգերը միմյանց նկատմամբ կարող են լինել համադաս: Այսինքն՝ եթե տնտեսագիտական տերմինահամակարգը առանձնացնում է բոլոր մանրահամակարգերի համար ընդհանուր գործածության տերմիններ (կապիտալ, բյուջե, բիզնես, բանկ, մարքեթինգ...), ապա մանրահամակարգերը ընդգրկում են նեղ մասնագիտական տերմիններ, որոնք գործածվում են տնտեսական տարբեր գիտակարգերում՝ ֆինանսական (էմիսիա, դիսկոնտ, սուբվենցիա, ավիզո), հաշվապահական (աժուր, դեբետ, կրեդիտ, ակցիզ, մարժա), տնտեսագիտական (դիվիդենտ, դեպորտ, կոնդիցիա, ալպարի) և այլն, առանձին վերցրած միմյանց նկատմամբ հավասարազոր են, համադաս:

Ուստի տնտեսագիտական տերմինահամակարգը տարբեր լեզուների տերմինահամակարգերի համար փոխառությունների մեծ պահոց է, որից օգտվում է ցանկացած զարգացած երկրի լեզու և ինչպես իր բառակազմական եղանակներով ու միջոցներով, այնպես էլ փոխառություններով ձևավորում սեփական տերմինահամակարգը:

Արդի հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգը՝ որպես լեզվաքննության առարկա, արժանացել է մի քանի գիտական ուսումնասիրությունների՝ կապված տերմինաբանության զարգացման միտումների, համալրման աղբյուրների, մասնավորապես՝ նորաստեղծ տերմինների, բառակազմական կաղապարների հետ⁷:

Սույն հոդվածի նպատակն է արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինները լեզվաքննության ենթարկել՝ ուսում-

⁶ Տե՛ս *Լ. Խաչատրյան*, Հայերեն լեզվաբանական տերմինների աստիճանակարգության հարցեր // «Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա», պրակ Ա, Ե., 2020, էջ 92:

⁷ Տե՛ս *Մ. Գրիշկյան*, Նորաբանությունները ժամանակակից հայերենի և անգլերենի տնտեսագիտական բառաշերտում, 2016; «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ժողովածու, - *Վ. Կատկալյան*, Տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին, Եր., 2021: *Մ. Տիոյան*, Հայերենի տերմինագիտության հարցեր, Եր., 2016:

նասիրելով ծագումը, իմաստային դրսևորումները, ցույց տալով փոխառությունների զարգացումն ու կապը տնտեսագիտության և հարակից գիտությունների տերմինահամակարգերի հետ:

Ուսումնասիրվել է մոտ 250 տնտեսագիտական փոխառյալ տերմին:

Տնտեսագիտական տերմինահամակարգի կապը տարբեր գիտատերմինահամակարգերի հետ: Ցանկացած գիտություն հասարակական ձեռքբերում է, հետևաբար այն չի կարող մեկուսի ձևավորվել, զարգանալ և չազդվել արտաքին գործոններից: Ուստի օրինաչափ է գիտության որևէ ճյուղի պատկանող տերմինի գործածությունը գիտական այլ ոլորտ(ներ)ում: «Այդ փոխադարձ կապի արդյունքում առաջ են գալիս երկու (կարող է նաև ավելի) բնագավառների կամ ճյուղերի ընդհանուր հասկացություն-տերմիններ՝ առաջացնելով տերմինաբանական միջհամակարգեր և ընդհանրական տերմինահամակարգեր»⁸:

Տնտեսագիտությունը, լինելով հասարակական գիտություն, սերտ կապի մեջ է փիլիսոփայության, իրավագիտության, քաղաքագիտության, հոգեբանության, մշակութաբանության, մարդաբանության, աշխարհագրության, պատմության, սոցիոլոգիայի, բնական գիտություններից՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, որոշ չափով՝ կենդանաբանության և բուսաբանության հետ, քանի որ այդ գիտությունների «հետազոտության արդյունքների օգտագործումը նպաստում է ավելի խորությամբ ճանաչելու տնտեսական երևույթները և դրանց համապատասխան օրինաչափությունները»⁹:

Գիտությունների փոխկապակցված զարգացումը տերմինահամակարգերում արտահայտվում է բառային նոր միավորների համալրմամբ, որոնց մեծ մասամբ փոխառություններ են:

Միջգիտական կապի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստող տնտեսագիտական փոխառյալ տերմինները, հատկապես՝ մի-

⁸ Հ. Պետրոսյան, Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանություն, մաս II, Եր., 2010, էջ 28:

⁹ Հ. Աղաջանյան, նույն տեղում, էջ 43:

ջազգային նշանակություն ունեցողները, մասնագիտական ոլորտից զատ, գործածվում են նաև այլ գիտաոլորտ(ներ)ում: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Տնտեսագիտության և փիլիսոփայության կապը արտահայտված է *տնտեսագիտության փիլիսոփայություն* գիտակարգով¹⁰: *Փիլիսոփայությունը* առկա է բոլոր գիտություններում: Այն զբաղվում է նոր, նախկինում գոյություն չունեցած երևույթների որոնմամբ, հայտնաբերմամբ և բացահայտում դրանք արմատապես: Առանձին գիտակարգեր, զարգացնելով բացահայտված հասկացությունների փիլիսոփայական ընկալումը, իրենց ուսումնասիրման շրջանակներում տալիս են այդ երևույթների մասնագիտական բացատրությունները և սահմանումները: «Փիլիսոփայական մտածողությունը օգնում է տնտեսական երևույթների ուսումնասիրությունը կատարել դրանց փոխադարձ կապի մեջ և այդ հիմքի վրա բացատրել համընդհանուր օրինաչափությունները»¹¹: Ուստի հանդիպում են տնտեսագիտական տերմիններ, որոնց առավել ընդհանրական նշանակությունները տեսնում ենք փիլիսոփայական բառարաններում¹², իսկ նեղ մասնագիտական բացատրությունները՝ մասնագիտական բառարաններում: Այսպես, կապիտալ, *արժեք*, *պահանջ-մուկ*¹³ տերմինները համընդհանուր են տնտեսագիտության և փիլիսոփայության համար: Եթե փիլիսոփայությունն ուսումնասիրում է այս տերմիններով արտահայտված հասկացությունների ներքին բնութագրական հատկանիշները, ապա տնտեսագիտությունը, դրանք օգտագործելով, հասկացություններն ուսումնասիրում է որոշակի գործառական տեսանկյունից: Այսպես, *կապիտալ* բառը փիլիսոփայական ըմբռնմամբ դիտարկվում է որպես ընդհանրա-

¹⁰ Տե՛ս Ա. Մարգարյան, Տնտեսագիտության փիլիսոփայություն, Ե., 2020:

¹¹ Հ. Աղաջանյան, Տնտեսագիտության տեսություն, մաս I, Ե., 2009, էջ 40:

¹² Փիլիսոփայական բառարան (Մ. Ռոզենտալի խմբագրությամբ), Ե., 1975; Л. Ф. Ильичев, П. Н. Федосеев, С. М. Ковалев, В. Г. Панов, Философский энциклопедический словарь, М., 1983:

¹³ Ընդգծված տերմիններին չենք անդրադառնալու, քանի որ փոխառություններ չեն:

կան հասկացություն, որը վերաբերում է տվյալ ազգի քաղաքակրթական մակարդակին, ավանդական բարքերին, հոգևոր ու բարոյական արժեքներին, մտավոր ներուժին, բնական հարստությանը, գիտության զարգացման աստիճանին և այլն: Իսկ իբրև տնտեսագիտական տերմին՝ այն բնութագրվում է որպես *արտադրության գործոն*, որի կարևոր դերը հնարավոր չէ ներկայացնել առանց փիլիսոփայական ընկալման:¹⁴

Տնտեսագիտական տերմինների հաճախակի գործածություն է նկատվում իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես՝ օրենսգրքերում: Պատճառն այն է, որ իրավագիտության սպասարկման դաշտը բավականին մեծ է: Վերջինս այս կամ այն չափով կարգավորում է գիտական գրեթե ցանկացած բնագավառ: Կապը տնտեսագիտության հետ սերտ է, քանի որ իրավախախտումների ռիսկը մեծ է սույն բնագավառում: Տնտեսագիտական այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են հարկումը, ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունները, գործարքներն ու ստուգումները կատարվում են բացառապես իրավական նորմերի սահմաններում¹⁵: Ուստի այս գիտությունների տերմինահամակարգերի ներթափանցումներն ունեն ակնառու օրինակներ:

Տերմինը չի կորցնում իր մասնագիտական բնորոշումը, եթե նույն նշանակությամբ է գործածվում այլ գիտահամակարգ(եր)ում, օրինակ՝ *էներգետիկա, ակտիվներ, ինկաստ, բյուջե, կոնցեսիա, բռնիֆիկացիա, դոտացիա, էմիսիա, էմիտենտ* և այլ տնտեսագիտական տերմիններ, պահպանելով նեղ մասնագիտական նշանակությունը¹⁶, ակտիվորեն գործածվում են իրավատերմինահամա-

¹⁴ Տե՛ս Հ. Աղաջանյան, նույն տեղում:

¹⁵ Տե՛ս *Е. П. Попова*, Связь экономической науки с другими науками, 2021, https://spravochnik.ru/ekonomika/svyaz_ekonomiki_s_drugimi_naukami/:

¹⁶ Սույն և ներքոնշյալ տնտեսագիտական փոխառյալ տերմինների բացատրությունները տե՛ս հետևյալ բառարաններում՝ Հ. *Գրգեարյան*, Ն. *Հարությունյան*, Տնտեսական աշխարհագրության տեղեկատու բառարան, Ե., 1982; Գր. *Կիրակոսյան*, Հ. *Ղուշյան*, Բ. *Տիգրանյան*, Տնտեսագիտական բացատրական բառարան, Ե., 1999; Ա. *Բայադյան*, Ֆինանսական բացատրական բառարան, Ե., 2004; *Կոբալյան Ա.*, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, 2005; Ա. *Մարկոսյան*,

կարգում, մասնավորապես՝ մաքսային, հարկային և այլ օրենսգրքերում և օրենքներում¹⁷: Օրինակ՝

Մասնակի վճարները կարող են ընդունվել բանկային կանոններով սահմանված դեպքերում կամ ինկասո հանձնարարության մեջ հատուկ թույլտվության առկայությամբ¹⁸:

Այս երևույթը առաջ է բերում տերմինահամակարգերի փոխադարձ ներթափանցումներ և հանգեցնում գիտությունների տերմինաբանական միջհամակարգերի ձևավորման:

Գիտահամակարգերի մերձավորությամբ պետք է բացատրել նաև մեկ այլ երևույթ: Երբ տարբեր տերմինահամակարգեր ունենում են նույն տերմինաբանական միավորները, որոնք արտահայտում են մասնագիտական բոլորովին այլ իմաստներ: Ըստ լեզվաբան Էդուարդ Ադայանի՝ «...գիտությունների զարգացման ընթացքում մեկի ձեռք բերած նվաճումները օգտագործվում են նաև հարակից մի շարք գիտությունների կողմից, յուրացվում նաև նրանց կողմից: Այս դեպքում էլ նախապես տվյալ բնագավառին հատուկ տերմինը անցնում է մյուս գիտություններին՝ դառնալով մի քանի գիտությունների տերմինաբանական համակարգի ընդհանուր տարր»¹⁹: Այսպես, տնտեսագիտական մի շարք տերմիններ, ընդլայնելով կամ նեղացնելով իրենց իմաստները, այսօր տալիս են տարբեր գիտաճյուղ(եր)ի՝ իրավագիտության, քաղաքագիտության, փիլիսոփայության, հոգեբանության, դիվանագիտության և այլնի մասնագիտական ուրույն բնորոշմամբ նշանակություններ: Օրինակ՝ *դեպոզիտ, էմբարգո, ռեիզիա* և այլ տնտեսագիտական տեր-

Տ. Դավթյան, Ամենագործաձական տնտեսագիտական տերմինների բացատրական բառարան, Ե., 2008; *Դ. Ջհանգիրյան*, Բանկային տերմինների բացատրական բառարան, Ե., 2008; *Ա. Հայրապետյան*, Օտար բառերի բառարան, Եր., 2011; *Ավ. Ավետիսյան*, Հայերենում գործածվող օտար բառերի բառարան, Ե., 2014:

¹⁷ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգիրք, 01.01.2018, ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038; ՀՀ մաքսային օրենսգիրք, 01.01.2001, ՀՀՊՏ 2000.08.21/19(117); ՀՀ օրենքը ՀՀ բյուջետային օրենքի մասին, 21.08.1997 ՀՀՊՏ 1997.08.11/18:

¹⁸ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998), ՀՀՊՏ 1998.08.10/17(50), հդ., 943:

¹⁹ *Էդ. Ադայան*, Տերմինագիտություն, Ե., 1978, էջ 9:

միններ արդի հայերենի տերմինահամակարգում գործածվում են նաև որպես իրավաբանական կամ այլ գիտակարգի տերմիններ: Ինչպես՝

Դեպոզիտ - 1. (ֆին.): Ավանդ՝ դրամական գումար կամ արժեթղթեր, որոնք հանձնվում են բանկերին կամ խնայդրամարկղերին՝ ի պահ:

2. (իրավբ.): Դատական հիմնարկներ (նոտարական գրասենյակ) մուծվող գումար՝ պահանջատերերին հանձնելու կամ պահելու համար:

Էմբարգո - 1. (տնտսգ.): Որևէ բանի արտահանման ու ներմուծման արգելք: 2. (իրավբ.): Օտար տերության պատկանող ունեցվածքի (նավի, բեռների ևն) ներկալում, նավարգելք:

Ռեհիզիա - 1. (տնտսգ.): Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում: 2. (դվնգ.): Միջազգային պայմանագրի վերանայում:

Ակրեդիտիվ - 1. (ֆին.): Դրամական փաստաթուղթ, որը պարունակում է մի բանկի վճարման հրաման մյուսին՝ ինչ-որ մեկին որոշակի գումար վճարելու: 2. (դվնգ.): Հավատարմագիր՝ լիազորագիր, որը հնարավորություն է տալիս լիազորելու որևէ դիվանագետի աշխատելու այլ պետության մեջ:

Ինդեքս - 1. (տնտսգ.): Ցուցանիշ՝ թվանշանային ցուցիչ, որ տոկոսներով արտահայտում է որևէ տնտեսական երևույթի հաջորդական փոփոխությունը: 2. (բժշկ.): Թվանշանային ցուցիչ, որ արտահայտում է մարմնի զանազան մասերի միջև եղած հարաբերությունը: 3. (մաթ.): Թվային կամ տառային ցուցիչ, որը դնում են աջից՝ թվանշանի կամ տառի կողքին: 4. (գրդր.): Ցուցիչ՝ դասակարգման աղյուսակների համար նշան՝ բաժնի կամ ենթաբաժնի տառային, թվային կամ խառը նշում, որը համապատասխանում է նկարագրված երկի բովանդակությանը:

Հանդիպում են նաև հակառակ երևույթի օրինակներ, երբ այլ գիտակարգերի տերմիններն են ընդլայնում իրենց իմաստները՝ անվանելով տնտեսագիտական կամ այլ գիտակարգերի հասկացու-

թյուններ: Այսպես՝ *նոտիֆիկացիա* - 1. (իրավք.): Միջազգային իրավունքում՝ մի պետության կողմից մյուսին միջազգային այս կամ այն հարցի վերաբերյալ սեփական մոտեցումների մասին տեղեկացնելը: 2. (ֆին.): Ծանուցագրում (մուրհակը բողոքարկման ուղարկելու մասին): 3. (դվնգ.): Հայտագրում, հայտագրով հայտնվելը. *պարհտետ* - 1. (իրավք.): Հավասարություն, հավասարիրավություն: 2. (տնտսգ.): Տարբեր երկրների դրամական միավորների փոխհարաբերությունը ոսկով. *ռեսպատրիացիա* - 1. (քղք.): Գերիների, տարագիրների, փախստականների վերադարձը հայրենիք, հայրենադարձություն: 2. (բանկ.): Արտասահմանյան բանկի կամ ռեզիդենտ բանկի մասնաճյուղի կողմից ֆինանսական ակտիվների վերադարձը հայրենիք. *ռոնիթորինգ* - 1. (քղք.): Ինչ-որ գործընթացի կամ վիճակի հետևելը: 2. (տնտսգ.): Դիտորդում՝ անընդմեջ վերահսկողություն տնտեսական գործընթացների նկատմամբ. *ռեալվացիա* - 1. (աշխգր.): Դրամական միավորի ոսկու պարունակության պաշտոնական բարձրացում կամ նրա վալյուտային կուրսի փաստական բարձրացում: 2. (բանկ.): Ազգային կամ միջազգային արժույթի փոխարժեքի բարձրացում²⁰:

Նույն տերմինը, տարբեր նշանակություններով պատկանելով տարբեր գիտաճյուղերի, տերմինաբանական համակարգում առաջացնում է լեզվական ոչ ցանկալի մի երևույթ, որը կոչվում է տերմինային բազմիմաստություն: Վերջինիս պատճառով առաջանում են իմաստային տարընկալումներ. տնտեսագիտական և այլ ոլորտի տեքստերի ընթերցումը դառնում է դժվարընկալելի:

Այսպիսով, տնտեսագիտությունը, այլ գիտակարգերի հետ ունենալով որոշակի աղերսներ, ձևավորում է նշված գիտությունների տերմինահամակարգերի հետ ընդհանրական և միջտերմինահամակարգեր: Ստեղծվում են «տերմինաբանական խառը՝ փոխհատվող խմբավորումներ», որոնց առկայությունը տարբեր գիտակարգե-

²⁰ Մասնագիտական բառերի տարբեր հաջորդականությունը (օրինակ՝ տնտսգ., իրավք., կամ իրավք., տնտսգ.) հուշում է, որ տերմինները հաճախակի են գործածվում նշված առաջին տերմինահամակարգում:

րում թույլ է տալիս մտածել, որ «այսօր գրեթե չկան առանձին (մեկուսի) անադարտ տերմինահամակարգեր»²¹:

Տնտեսագիտական փոխառյալ տերմինների ծագումնաբանական և իմաստային դրսևորումները: Հիմք ունենալով տնտեսագիտության նախապատմությունն ու նրա՝ որպես գիտական համակարգի կայացման ուղին՝ առավել հիմնավոր կարող ենք խոսել արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինների ծագման մասին:

Փոխառությունների ծագումնաբանական առանձնահատկությունները կապված են համաշխարհային տնտեսագիտության պատմական զարգացման հետ:

«Տնտեսագիտությունը՝ որպես գիտություն, ծագել է շատ ավելի ուշ, քան տնտեսության վարման մասին դատողությունները՝ տնտեսագիտական միտքն ու տնտեսական մտածողությունը: Վերջիններս (և սա անառարկելի է) մարդ կոչվածի անբաժան ուղեկիցն են եղել նրա արարման ավարտի հենց առաջին ակնթարթից: Միայն մտածողական ու գիտելիքի որոշակի պաշարի կուտակումից հետո են արվել տեսական ընդհանրացումների առաջին փորձերը»²², որոնց միջոցով էլ գրավոր ճանապարհով հաստատվել և իբրև պատմագիտական ժառանգություն փոխանցվել են տնտեսագիտական առաջին տերմինները²³:

Դեռևս վաղ ժամանակներում և միջնադարում տնտեսագիտական հայացքներն ու պատկերացումները ձևավորվել են առավելապես Հին Հունաստանում և Հին Հռոմում, միջնադարում դրանց զարգացումն ընթացել է երկու ուղղություններով՝ իսլամական արաբական Արևելքում և արևմտաեվրոպական քրիստոնեական երկրներում:

²¹ Հ. Պետրոսյան, Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանություն, մաս II., Ե., 2010, էջ 30-31:

²² Գ. Գալստյան, Հ. Մարգարյան, Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները, Ե., 2016, էջ 8:

²³ Տնտեսագիտությանը վերաբերող առաջին աշխատությունը՝ Գ. Բյուդեի «Տրակտատ ասսայի մասին», լույս է տեսել Ֆրանսիայում 1514 թվականին: Տե՛ս Լ. Անանյան, Լ. Պետրոսյան, «Տնտեսական պատմություն» ուսումնական ձեռնարկ, Ե. 2005, էջ 4:

րում: Հետևաբար այս երկրների լեզվական արտահայտումները խոր արտացոլում են գտել տնտեսագիտական մտքի և տերմինահամակարգի ձևավորման, զարգացման և կայացման ճանապարհին, ու մինչ օրս դրանց մեծ մասը կիրառելի է տնտեսագիտական տերմինահամակարգում: Արդի հայերենի տնտեսագիտական բառապաշարում մեծ թիվ են կազմում հունական ծագում ունեցող տերմինները, ինչպես՝ *ազրոնում, բիրժա, էկոնոմիկա, էներգետիկա, կրիտերիա, օլիգոպոլիա, սինդիկատ, հիպոթեկա, կրիզիս* և այլն: Հունարենին գերակշռում են լատինական ծագման տերմինները, ինչպես՝ *ակցիզ, արենդա, դեպոզիտ, դոտացիա, կապիտալ, կրեդիտ, սուբվենցիա, ռեֆլյացիա, պրեֆերենցիա* և այլն: Հետազոտության առարկա նյութից առանձնացրել ենք արաբական ծագման 1՝ *տարիֆ* տերմինը:

Տեսական տնտեսագիտությունը իբրև գիտակարգ սկսեց ձևավորվել 17-18-րդ դարերում, երբ զարգանում էր եվրոպական երկրների տնտեսությունը, գրի էին առնվում տնտեսագիտական նոր պատկերացումներ և հայացքներ: Դասական տնտեսագիտության կայացման երկիր է դառնում Անգլիան²⁴: Այս հանգամանքի վկայությունն են անգլիական ծագում ունեցող տնտեսագիտական բազմաքանակ տերմինները, ինչպես՝ *աուդիտ, բիզնես, բյուջե, օֆշոր, տրեստ, դեմպինգ, դիլեր, տենդեր, լիզինգ, հեջինգ, վաուչեր, ինսայդեր, ֆակտորինգ* և այլն: Այսօր էլ հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգում շարունակվում է անգլերեն տերմինների հոսքը, այն էլ՝ առանց միջնորդ լեզվի, ինչպես՝ *տենդեր, սվոփ, ստարթափ, բայ բեք, բոներ, թայմ-չարտեր* և այլն:

Բավականին մեծ թիվ են կազմում *իտալական ծագման* տերմինները, օրինակ՝ *սալդո, վալյուտա, նետտո, բրուտտո, ինկասսա-տոր, ինկասո, ավիստա, օբլիգո* և այլն²⁵:

²⁴ Տնտեսագիտությունը գիտական բնագավառում առանձին գիտակարգ «հռչակվեց» անգլիացի մտածող Ադամ Սմիթի ջանքերով:

²⁵ Չմոռանաք, որ իտալերենը ծագել և ձևավորվել է լատիներենի ազդեցությամբ, որն էլ կարող է լինել իտալերեն տերմինների «առատության» պատճառ:

Արդի հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգն աչքի է ընկնում եվրոպական այլ լեզուներից փոխառված տերմիններով, ինչպես՝

Ֆրանսերենից փոխառված տերմիններ՝ *ավանս, ակցիոն, դեպորտ, աժուր, բանկ, դիսբալանս, մոնետարիզմ, ռիսկ, ֆրանշիզա* և այլն,

գերմաներենից փոխառված տերմիններ՝ *ակրեդիտիվ, դեկորտ, վեկսել,*

իսպաներենից փոխառված տերմիններ՝ *կարգո, կոմպրադոր, էմբարգո, ֆիսկալ:*

Տնտեսագիտական տերմինահամակարգի ձևավորման համար հիմք են դարձել այն երկրների լեզուները (հունարեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն, ...), որոնցով մտածել են, հաղորդակցվել և գրի առել տնտեսագիտական առաջին պատկերացումներ, մտքեր ու գաղափարներ ունեցող անհատները: Կուտակված փորձի հիման վրա գրվել են առաջին տեսական նյութերը: Այս ամենի շնորհիվ՝ տնտեսագիտությունը ձևավորվել, զարգացել է իբրև առանձին գիտակարգ, որի մշտական ուղեկիցն է եղել մասնագիտական բառապաշարը՝ իր աստիճանական համալրմամբ և կայացմամբ:

Արդի հայերենի տնտեսագիտական փոխառությունների լեզվագործառական զարգացման ընթացքը տարաբնույթ է: Այս առումով առանձնացնում ենք փոխառությունների 4 խումբ: Հավելենք, որ փոխառությունների մեծ մասն ունի միջազգային նշանակություն:

1. Փոխառություններ, որոնք չունեն հայերեն համարժեք տարբերակներ, ինչպես՝ *աժիո, դեպոզիտարիա, էմբարգո, լիստինգ, բիֆլյացիա, ֆակտորինգ, ֆյուչերս, կոնցեսիա, օֆշոր* և այլն:

2. Մրցորդ փոխառություններ, որոնք ունեն իրենց հայերեն համարժեք տարբերակներին զուգահեռ գործածություն. «Եթե հաղթում են, անցնում են հիմնական բառազանձ»²⁶, *օրինակ՝ մարքեթինգ – շուկայագիտություն, մենեջնենթ – կառավարում, դիվիդենտ*

²⁶ Յու. Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ե., 2019, էջ 36:

– շահութաբաժին, դնավացիա – արժենվագում, սուբարենդա – ենթավարձույթ, աուդիտ – հաշվեստուգում, դեկորտ – ապրանքազեղչ, դեպորտ – հետադարձում, դեֆիցիտ – պակասուրդ, դեմպինգ – գնազցում, էքսպորտ – արտահանում, էկոլոգիա – բնապահպանություն, իմպորտ – ներմուծում, ինկասացիա – դրամագանձում, կալկուլյացիա- արժեհաշվում, դոտացիա – լրավճար, հեջինգ – կրկնագործարք, սալդո – հաշվեմնացորդ, ռեզրես – հետընթաց, ֆրանշիզա – առանձնաշնորհ, ինֆլյացիա – գնաճ, դեֆլյացիա – գնանկում, կորպորացիա – մասնատիրություն, տաքսացիա – գնահատում, դեպոզիտ – ավանդ, ֆիլիալ – մասնաճյուղ, օվերդրաֆտ – վերազանցում, ֆիսկալ – հարկաբյուջետային և այլն²⁷: Այս բառազույգերը ստեղծում են տերմինային հոմանիշություն, այսինքն՝ առանց որևէ սահմանափակման կարող են փոխարինել միմյանց մասնագիտական խոսքում:

Արդի հայերենի տնտեսագիտական փոխառություններում տերմինային հոմանիշությունը իր դրսևորման նվազագույն շեմին է: Պատճառն այն է, որ տերմինների մեծամասնությունը միջազգային նշանակության բառեր են, և անգամ դրանց հայերեն համարժեքների առկայությունը լուրջ խոչընդոտ չի կարող դառնալ հոմանիշության տարածմանը, քանի որ դրանք թվով սահմանափակ են՝ կապված փոխառության իմաստը լիաժապալ հայերեն համարժեքով արտահայտելու հետ:

3. Փոխառություններ, որոնք գերազանցում են իրենց գործածությամբ հայերեն տարբերակներին, քանի որ վերջիններս ամբողջ ծավալով չեն արտահայտում անվանվող հասկացությունների իմաստային դաշտը, օրինակ՝ *բիզնես – գործարարություն, բանկ – դրամատուն, բիրժա – սակարան, աուդիտոր – հաշվեստուգիչ* (առավել հարմար տարբերակ է *հաշվեստուգող* բառը, որը տերմինային թարգմանության մեջ նշված չէ), *ինկասատոր – գանձիչ, ինսայդեր – ներքնանձ, կապիտալ – դրամազուլիս, կոնսիգնացիա – վաճառատվություն, հիպոթեք – գրավադրում, չարտեր – վարձերթ*,

²⁷ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Ե., 2006:

ստագֆյացիա – լճագնաճ, վալորիզացիա – արժեաճեցում, տենդեր – առևտրամրցույթ, տրանսֆեր-փոխանցում և այլն:

«Օտար բառերի բառարանում» *լիզինգ* և արենդա փոխառությունների հայերեն համարժեք տարբերակը նշվում է *վարձակալություն* բառը, որից հետո տրվում է յուրաքանչյուր տերմինի մանրամասն բացատրություն: Հետևաբար չպետք է նույնացնել սույն փոխառությունները, քանի որ դրանք անվանում են վարձակալության տարբեր տեսակներ: Այսպես՝

լիզինգ - «Վարձակալություն՝ արտադրական կառույցների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալություն».

արենդա - «Վարձակալություն՝ հողի՝ շինության և այլնի ժամանակավոր վարձակալություն՝ որոշակի գումարի վճարումով»²⁸:

Տնտեսագիտական տերմինահամակարգում *արենդա* տերմինը բազմիմաստ է: Համաձայն 2-րդ իմաստի՝ տերմինի հայերեն համարժեքն է *վարձավճար* բառը:

4. Փոխառություններ, որոնք այլևս չեն գործածվում գրական լեզվում, զիջում են հայերեն համարժեք տարբերակներին՝ դառնալով օտարաբանություններ, ինչպես՝ *բիզնեսմեն – գործարար, բալանս – հաշվեկշիռ, բրենդ – ապրանքանիշ, վաուչեր – արժեթուղթ, մենեջեր – կառավարիչ, կոնտրաբանդ – մաքսանենգություն, ինվեստիցիա – ներդրում, ինվեստոր – ներդրող, ինվալյուտա – արտարժույթ, ինդուստրիա – արդյունաբերություն, էկոնոմիկա – 1. տնտեսություն, 2. տնտեսագիտություն, էկոնոմիստ – տնտեսագետ, ինվենտարիզացիա – գույքագրում, սերտիֆիկացիա – հավաստագրում, պրեֆերենցիա – արտոնություն, նումիզմատիկա-դրամագիտություն, պանիկա – խուճապ* և այլն:

Տնտեսագիտական փոխառությունները տերմինահամակարգում ստեղծում են նաև տերմինային հականիշություն, ինչպես՝ *նետտո – բրուտտո, պրոֆիցիտ – դեֆիցիտ, ինֆլյացիա – դեֆլյացիա* բառազույգերը:

²⁸ Ս. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Ե., 2011, էջեր 250, 69:

Եզրակացություններ:

1. Գիտությունների փոխկապակցված զարգացմամբ պայմանավորված՝ փոխառությունների մուտքը ցանկացած տերմինահամակարգ բնական է: Դրանց արտալեզվական և ներլեզվական զարգացումները խիստ սուբյեկտիվ են՝ կապված տվյալ երկրի աշխարհաքաղաքական հարաբերությունների, քաղաքակրթության զարգացվածության, լեզվակիրների լեզվամտածողության, բառակերտման և այլ առանձնահատկությունների հետ:

2. Տնտեսագիտական տերմինահամակարգը սերտորեն համագործակցում է հասարակական և բնական գիտությունների տերմինահամակարգերի հետ, որի հետևանքով ձևավորվում են միջգիտական և ընդհանուր տերմինահամակարգեր:

3. Ստուգաբանական քննության համաձայն՝ արդի հայերենի տնտեսագիտական փոխառությունները փոխանցվել են այն լեզուներից, որոնց կրողները իրենց՝ տնտեսագիտական առաջին մտքերով ու պատկերացումներով հիմնավոր դեր են խաղացել տնտեսագիտության՝ որպես առանձին գիտակարգի ձևավորման և կայացման գործում:

4. Խուսափելով լեզվում օտար բառերի կուտակումից՝ հայերեն համարժեք տարբերակներ կազմելու փորձեր են կատարվում, որոնցից ընտրվում են այն տարբերակները, որոնք հասարակության համար բարեհունչ են և լիարժեքորեն են արտահայտում հսկացության իմաստը:

Ключевые слова: экономический термин, заимствование, армянский эквивалентный вариант, общие и междисциплинарные терминосистемы, отрасли науки, терминологическая полисемия, терминологическая синонимия.

Карслян А. Р. - Лингвофункциональная характеристика заимствованных экономических терминов современного армянского языка. - Предметом исследования данной статьи являются заимствованные экономические термины современного армянского языка, большая часть которых представляет собой интернациональные

слова. Согласно этимологическому анализу заимствование терминов происходило из тех языков, на которых развивалась экономическая мысль и первые представления об экономике, а носители этих языков сыграли определенную роль в становлении и развитии экономики как отдельной дисциплины. В качестве социальной науки экономика тесно сотрудничает с общественными и естественными науками, в результате чего формируются междисциплинарные и общие терминосистемы. Во избежание скопления иностранных слов в языке, со временем делаются попытки создания армянских эквивалентов, из которых отбираются те варианты, которые являются благозвучными для общества и полностью передают все значения семантического поля того или иного понятия.

Keywords: economic term, borrowing, an equivalent Armenian version, general and interterm systems, scientific branches, term polysemy, term synonymy.

Gharslyan A. R. - Linguo-Functional Characteristics of Modern Armenian Borrowed Economic Terms. - The given article aims to study the borrowed economic terms of Modern Armenian, most of which are words of international significance. According to the etymological analysis, the borrowed terms were taken from those languages in which the first economic thoughts and ideas were expressed, the speakers of which had a significant role in the formation and establishment of economics as a separate discipline. Economics, as a social science, is in close cooperation with social and natural sciences, as a consequence of which interdisciplinary and general terminology systems are formed. Avoiding the accumulation of foreign words in the language, in the course of time attempts are being made to create equivalent versions in the Armenian language, among which are chosen the versions that are pleasant to the ear of the society and fully express the semantic field of the concept.